

ԱՆՅԱՅՏ ԲԱՆԱՍՏԵՂԾԸ

Այս տարի Նօբէլեան մրցանակը, գրական բաժնի համար, ստացել է հնդիկ բանաստեղծ Ռաբինդրա Նաթ Տագօր անունով մէկը: Ո՞վ է այդ մարդը, ի՞նչ ունի գրած, մենք չգիտենք. և ոչ միայն մենք, այլ և եւրոպական, նոյն իսկ անգլիական մամուլը շատ քիչ բան գիտէր նրա մասին: Եւ երբ Նօբէլեան մրցանակը բաշխուեց նրան, ամէնքը զարմացական հայեացքով իրար էին նայում, թէ Նաթ Տագօր, բանաստեղծ, սրտեղից դուրս եկաւ սա:

Կամաց-կամաց պարզուեց, որ Ռաբինդրա Նաթ Տագօրը հնդիկ բանաստեղծ է, որ երեսունհինգ տարի է գրում է բենգալական բարբառով, որ մի քաղցրահնչուն, հարուստ և մշակուած լեզու է: Նրա մասին մի քանի տեղեկութիւններ կարդում ենք ռուսական մամուլի մէջ:

Ռաբինդրա Նաթը ոչ միայն բանաստեղծ է, այլ և երաժիշտ. համարեա բոլոր նրա ոտանավորները ժողովրդական երգեր են դարձած: Երբ որ նա իւր ոտանավորները արտասանում կամ երգում է կալիաթայի մայր տաճարում, թէ տաճարը և թէ մօտակայ փողոցները լիքն են լինում բազմութեամբ: Ներկայիս հնդիկ մտաւորականներն այնքան բարձր են գնահատում նրա տաղանդը, որ բանաստեղծութեան ժամանակակից շրջանը նրա անունով «Ռաբինդրայի շրջան» են անուանում:

Ռաբինդրան իւր ոտանավորները սկսել է շարագրել հինգ այն օրուանից, երբ խօսել է սկսել: Չափն ու յանգը նրա խօսակցութեան սովորական ձևերն են եղել: Նրա մանկական ոտանավորները ծաղիկների, թիթեռների, թռչունների մասին նոյն իսկ թարգմանած էլ շատ սիրուն են: Տասնվեց տարեկան միջոցին նա գրել է մի վէպ, որ ահագին յաջողութիւն է գտել Հնդկաստանում, իսկ գրած դրաման մինչև այսօր էլ ներկայացնում են բեմերի վրայ: Քսան տարեկան հասակում դնում է Անգլիա իրաւագիտութիւն ուսանելու, բայց եւրոպական կեանքը նրան թւում է կոշտ, անողորմ և իդէալից դուրի, և նա, առանց Օկսֆորդի համալսարանն աւարտելու, շտապում է վերադառնալ հայրենիք: Հնդկաստանում նա սիրահարւում է, ամուսնանում և շատ երջանիկ կեանք ոտեղծում, որի միջոցին էլ, 25-35 տարեկան հասակում,—նա գրել է իւր բոլոր սիրային ոտանավորները, որոնք ամփոփուած են

«Պարտիզայան» գրքի մէջ: Ապա վախճանուում է խանդավառ սիրով սիրած կինը և Տադորի կեանքի մէջ խիստ փոփոխութիւն է առաջ գալիս՝ նրա մէջ տիրապետող տրամադրութիւնը դառնում է ինքն իր մէջ կեդրոնացման ու կրօնական յափըշտակութեան ուղղութիւնը: Ահա ինչպէս է նկարագրում նա այդ փոփոխութիւնը իւր «Գիտունջալի» (Երգային նուէրներ) գրքի մէջ:

«Յուռահասական ակնկալութեամբ որոնում էի ես նրան իմ տանս մէջ, բայց չէի գտնում և ոչ մի տեղ: Բայց մեծ է Քո ապարանքը, ով տէր, և ես իմ որոնումներս անելով հասայ Քո դրան:

«Կանգնած եմ Քո իրիկուան ոսկեհիւս երկնային ամպ-հովանու տակ և աչքերս ուղղում Քո դէմքին:

«Ես մօտեցայ Յաւիտենականութեան եղերքին, որից ոչ մի բան կարող չէ խոյս տալ, ոչ երջանկութիւնը, ոչ յոյսը և ոչ արցունքի միջից տեսածդ դէմքի վաղանցուկ տիպարքը

«Ո՛հ, խառնիր իմ դատարկուն եղած կեանքս այդ կեանքի օվկեանոսին, սուղիր նրան այդ ամենախոր-խոր անդունդների մէջ: Անսահման տիեզերքի մէջ թող մի անգամ էլ զգամ ներաքնքոյշ հպումը»...

Տադորի բանաստեղծական տաղանդի մասին մի փոքրիկ դադափար տալու համար առաջ բերենք մի քանի երգեր նրա «Պարտիզայան» գրքից:

Բ ա ն ա ս ե դ ծ .

Աւուկանս ծովը ձգեցի: Եւ խաւար անդունդից հանեցի ուռ-կանս լի տարօրինակ ձևի ու տարօրինակ դեղեցկութեան ա-ռարկաներով: Ոմանք փայլում էին որպէս ժպիտ, ոմանք շող-շողում էին որպէս արցունք, ոմանք հրհրատում էին որպէս նորահարսի այտերը:

Եւ երբ որսս առած տուն էի դառնում, սիրունիս պարտի-զում նստած ծաղկի տերեւներն էր պոկոտում: Եւ ես ամբողջ որսս դրի նրա ոտների տակ ու լուռ կանգնած էի նրա առաջ: Նա մտիկ արաւ և առայ. — Ի՞նչ տարօրինակ բաներ են ինչի՞ են պէտք դրանք:

Ամօթահար՝ գլուխս կախ դցեցի և միտք արի. «պատե-րազմով չեմ ձեռք բերել ես այս ամենը և ոչ վաճառանոցում գնել. նուէրի արժան չեն դրանք:

Եւ ամբողջ գիշերը մէկիկ-մէկիկ պատուհանից փողոց էի շարտում ես նրանց:

Իսկ առաւօտեան երեացին անցորդները, հաւաքեցին ու տարան հեռու աշխարհքներ:

Մ ա ճ ե ա կ

«Մայրիկ, նորատի արքայազներ մեր դռնով պիտի անցկենայ,
— ես այսօր անկարող եմ աշխատել:»

«Սովորեցրո՛ւ, մայրիկ, ջան, ինչպէ՛ս հիւսկեմ ես իմ ծամերս,
ասո՛ւ, ի՞նչ հագուստ հագնեմ ես այսօր:»

«Գիտեմ, նա ամենեւին իմ պատուհանին չպիտի նայի:
Գիտեմ մի ակնթարթում անց կ'իենայ մեր մօտով, և միայն
սրնդի հեկեկանքը հեռուից կ'հասնի իմ ականջին:»

«Բայց նորատի արքայազներ կ'անցնի մեր դռնով, և ես
կուզէի զարգարուել ամենալաւ զարգերով...»

«Ո՛հ, մայրիկ, արքայազներ անցկացաւ. վաղորդեան ա-
րեւը շողշողում էր նրա արշաւակառի վրայ:»

«Ես մի կողմ արի դէմքիս քօղը, կտրեցի իմ վզիս սուտակ-
նեայ մանեակն ու ձգեցի ճամբի վրայ:»

«Գիտեմ, նա իմ մանեակս չվերցրեց. գիտեմ, ծանր ակ-
ները փշրեցին սուտակներս ու ճամբի փոշու մէջ միայն կար-
միր հետք թողին, և ոչ ոք չիմացաւ թէ ի՞նչ նուէր էր դա և
ու՛մը տրուած:»

«Բայց նորատի արքայազներ անցաւ մեր դռնով, և ես իմ
կրծքի գանձը նետեցի նրա առաջ:»

Մ ու Ր ա Յ ի կ ր.

— Ի՞նչ որ տալիս է բո իեձքդ, ես կ'ընդունեմ ամեն
բան, ես ուրիշ ոչինչ չեմ խնդրիլ:»

— Այո, այո, գիտեմ, հեղ մուրացիկ, — դու ուզում ես
բոլորը, որ ես ունեմ:»

— Մի անպէտք ծաղիկ տուր ինձ, և ես այդ ծաղիկը կը
պահեմ սրտիս խորքում...»

— Հապա՛ եթէ փուշ ունենայ:»

— Նրանց ցաւին ես կ'ըկմանամ...»

— Այո, այո հեղ աղքատ, ես այդ գիտեմ, դու ուզում ես
այն ամենը, որ ես ունեմ:»

— Թէ որ գէթ մի անգամ քո աչքերդ բարձրացնէիր իմ
վրայ, ես մինչ գերեզման երջանիկ կ'լինէի:»

— Հապա՛ եթէ միայն դաժան լինի իմ հայեացքը:»

— Ես առ միշտ կ'յիշէի այդ, թէկուզ դա խայթելիս
լինէր իմ սիրտս ու հոգիս...»

— Այո, այո, ես այդ գիտեմ, հեղ աղքատ, դու ուզում
ես այն ամենը, որ ես ունեմ...»

Ահա մի ոտանաւոր էլ, որը ինչքան խորիմաստ, նոյնքան
և հակիրճ է դրուած:

Ե ր կ ի ր.

Մեծ դանձ չունիս դու, խաւար, համբերատար մայր իմ:

Դու տքնում ես, որպէս զի կերակրես զաւակներինդ, բայց
նրանց ամենքին կերակուր չի հերիք անում:

Երջանկութեան նուէրները, որ տալիս ես մեզ, անկա-
տար են:

Այն խաղալիքները, որ քնծայում ես զաւակներինդ, դիւ-
րաբեկ են:

Քու ժպտադ ցաւախառն է, բայց և քաղցր աչքերիս.
սէրը, որ պարզեւում ես մեզ, խաբուսիկ է, բայց և հաճելի
իմ սրտին:

Քո կուրծքդ կեանք է անուցանում մեզ, բայց ոչ անմահ-
ութիւն—ահա թէ ինչու անհանգիստ են քո աչքերդ:

Դարեր երկար դու աշխատում ես, բայց քո երկինքդ ու-
րոք դրախտդ դեռ չեն շինուած:

Քու ստեղծած գեղոյքդ արցունքներով են մռայլում:
Բայց ես տեսայ քու քնքոյշ դէմքդ և սիրում եմ, սիրում եմ
քո թախծամած փոշիդ, ով իմ մայր երկիր:

Թարմութիւն է փչում այս տողերից. թէպէտ ձեռով տար-
բեր, արապյայտութեան եղանակով ուրոյն, բայց իմաստը
օտար չէ քնդհանուր մարդկային գաղափարներին:

Մի բանի հեաքըքրական տեղեկութիւններ կան հա-
ղորդուած նաև բանաստեղծի հօր մասին:

Ռաբինարա Նաթը հնդկական նշանաւոր փիլիսոփայ Դե-
րինդը Նաթի որդին է: Նրա հայրը, Մադարշա (մեծ իմաս-
տուն) մականունն ստացած, քնդսենակ էր ամբողջ ժամերով
խորասուզուել մտքերի մէջ, և բոլորովին չէր նկատում իւր
շրջապատը: Երբ նա իւր պարտիզում նստած մտքի առնն էր
ընկնում, սկիւռները ծառերի վրայից ռստոտում էին նրա
վրայ և թռչունները դալիս թառ էին լինում նրա ձեռներին:
Մի անգամ նա դետում լողանալիս մտածութեան մէջ ընկաւ,
ու թ ժամ մնաց ջրի մէջ և այդ բոլոր միջոցին կանգ էր առել
մակոյցների երթևեկութիւնը, որովհետև նաւաստիները չէին
ուղղում խանգարել իմաստունին:

Ռաբինդրա Նաթը Հնդկաստանում անգլիական կառա-
վարութեան յայտնի է որպէս մասնակից Ալադէլիների հակա-
անգլիական շարժման, իսկ իբրև բանաստեղծ—անյայտ:

Ս. Էլադներ, ու Ռաբինդրա Նաթ Տագորը ունի անգլիերէն
հրատարակած իւր ոտանաւորների երկու հատորը, որ ինքն է
թարգմանած: